ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ճորտերի ազատութեան 50-ամեակի առիթով կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի կարգադրութեամբ Մայր Տաճարում կատարուեց փետրվարի 18-ին երեկոյեան ժամերգութիւնից յետոյ հանգստեան պաշտօն ի Տէր հանգուցեալ ազատարար Կայսր Ալէքսանդր Բ. Նիկոլայեվիչի համար, իսկ 19-ին հանդիսաւոր Ս. պատարագից յետոյ, որ մատոյց Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը, կատարուեց կայսերական մաղթանք այժմ թագաւորող Նիկոլայ Բ. Կայսեր բարեբաստ թագաւորութեան և կայսերական ընտանիքի բարօրութեան համար։ Ս. պատարագին և մաղթանքին միաբանութեան հետ ներկայ էին ճեմարանի աշակերտները ուսուցչական խմբի հետ և բազմաթիւ ժողովուրդ։

Գիբրալթարի անգլիական եպիսկոպոսը, որ անցեալ տարի այցելել էր Մայր Աթոռս հանգուցեալ Տ. Մատթէոս Բ. Կաթուղիկոսի անունով Մայր Տաճարին նուէր է ուղարկել սկհոյ մի քօղ, որ կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը՝ ստանալով յանձնեց Մայր Տաճարի լուսարարապետին պատուիրելով մուտք գրել տաճարի եկեղեցական զարդերի և սպասների տումարում և գործադրել հարկաւոր ժամանակին։

Սկհոյ քօղը կապտագոյն ընտիր ծաղկաւոր ատլաս է մի քառակուսի մետր ծաւալով, նուրբ ասեղնագործ և գոյնզգոյն մետաքսեայ ոսկեթել բանուածքով։

Քօղի կենտրոնում շրջանակի մէջ բանուած է Գառն Աստուծոյ պարզած խաչագրօշը, շրջանակից դուրս արձակելով խաչաձև ոսկեթել ճաճանչներ։ Քօղի չորս անկիւնում մետաքսեայ գոյնզգոյն թելերով բանուած են թևատարած և կանգուն չորս հրեշտակներ, որոնցից երկուսը բուրվառով խնկարկում են, իսկ երկուսը երկիւղածութեամբ ձեռնամած աղօթում։ Քօղի շրջանակը ձևացնում

է խաղողի ոստ տերևներով ու ողկոյզներով, որ երեք տեղ ընտհատուում է ցորենի հասկերով իսկ չորրորդ տեղում բանուած է անգլիական եպիսկոպոսների նշանակը։ Քողը եղերաւորուած է մետաքսեայ և ոսկեթել երիզով։

Տիկին Վարվառէ Քանանեանը կամենալով իւր հանգուցեալ Վարդան որդու յիշատակին Մայր Աթոռի ճեմարանին կից Մանկավարժական Թանգարան շինել՝ տարեսոյս յունվարի 22-ին գրում է ճեմարանի տեսուչ Տ. Բագրատ վարդապետին հետեւեալ նամակը.

«Ցանկանալով Ս. Էջմիածնում ունենալ բարի յիշատակ յանուն իմ հանգուցեալ որդու Վարդան Ակիմեանի, ես յատկացնում եմ երեսուն հազար ռուբլի Մանկավարժական թանգարանի (педагогический музей)։

«Այդ գումարից քսանհինգ հազար ռուբլին պիտի ծախսուի առանձին յարմար շէնք կառուցանելու համար Գէորգեան Հոգևոր ճեմարանի բակում, իսկ մնացեալ հինգ հազար ռուբլով պէտք է գնուեն Մանկավարժական թանգարանի համար դպրոցական կահ-կարասիք ու դասական պիտոյքների նմուշներ, մի մի օրինակ դասագրքեր, քարտէզներ, գլոբուսներ, դիտողական ուսման համար պատկերներ, ալբոմներ, մանկավարժական կրթութեան ու առարկաների դասաւանութեան նպաստող անհրաժեշտ դասական իրեղէնների ժողովածուներ ըստ Ձեր բարեհայեցողութեան, անշուշտ ինկատի ունենալով մեր դպրոցների ծրագիրն ու պահանջները։

«Այս մանկավարժական թանգարանը պիտի լինի Ս. Էջմիածնի վանքի սեպհականութիւնը, ամենայն Հայոց Մայրագոյն պատրիարք-կաթուղիկոսի իրաւասութեան տակ և Հոգևոր ճեմարանի Մանկավարժական խորհրդի ու վարչութեան ղեկավարութեան տակ։

«Այս Մանկավարժական թանգարանի նպատակը պիտի լինի նպաստել Հոգևոր ճեմարանի ուսանողների ու մեր եկեղեցական-ժխական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների մանկավարժական կրթութեան գործին, կազմակերպելով պարբերաբար մանագիտական-մանկավար-